

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Սալվարդի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի (35,5 դասաժամ), մայրենի / 6,5 ժամ/, հայոց լեզու և գրականության / 2,5 ժամ/, ռուսաց լեզու / 7,25 ժամ/, ֆիզիկա / 1 ժամ/, կենսաբանություն / 1 ժամ/, տեխնոլոգիա / 4,25 ժամ/, ֆիզկուլտուրա / 7,75 ժամ/, երաժշտություն / 1 ժամ/, կերպարվեստ / 1,25 ժամ/, ինֆորմատիկա / 1 ժամ/, ՆԶՊ / 0,5 ժամ/, աշխարհագրություն / 1,5 ժամ/ ուսուցչի թափուր տեղ/երի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 14-ից մինչև սեպտեմբերի 28-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից՝ Սալվարդի հիմնական դպրոցում:

Մրցույթը տեղի կունենա **2022թ. սեպտեմբերի 30-ին՝ ժամը 14:00-ին** Սալվարդի հիմնական դպրոցում, հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, Սիսիան համայնք, գ. Սալվարդ 3/12: Տեղեկությունների համար զանգահարել +37494672017 հեռախոսահամարով:  
«Սալվարդի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ՀՎՀՀ 09802982

Դպրոցի տնօրեն՝ Անդրանիկ Իվանյան